ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

12.06.2019թ.
ժամը 12 [15]

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱՎ Ի.Հ.Ք. միջոցներով ապահովման բաժնի պետ, գնդապետ Ա. Հովսեփյան,

գնահատողներ՝

- ՀՀ ՋՈՒ ՄՊ վարչության պլանավորման բաժնի պետ, գնդապետ Ա. Վարդանյան,
- ՀՀ ՋՈՒ ՄՊ վարչության ՆՏԱ բաժնի շահագործման բաժանմունքի ավագ սպա, փոխգնդապետ Վ. Ղևոնդյան,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, քիմիական և հետախուզական միջոցներով ապահովման գնման բաժնի առաջատար մասնագետ Ա. Սիմոնյան,

Գնումները համակարգող՝

- ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի բաժնի պետի տեղակալ Ա. Բաղրամյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/8»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են հրավերի պահանջներին, բացառությամբ **«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութաքրի, որում առկա է անհամապատասխանություն՝

- «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/8» ծածկագրով ընթացակարգի հրավերում ներառված տեխնիկական բնութագրում հատակ նշված է, որ մալուխների փաթույթի երկարությունը պետք է լինի 500մ, իսկ Ձեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում նշված է՝ փաթույթի երկարությունը 500մ կամ 500-ի բազմապատիկը:

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցրեց նիստը և առաջարկեց մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

13.06.2019թ-ին գնահատող հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

Սահմանված ժամկետում **«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ**-ի կողմից ներկայացվեց տեխնիկական բնութագրի շտկված տարբերակը, որը գնահատող հանձնաժողովի կողմից ընդունվեց որպես բավարար հրավերի պահանջներին:

1.2 13.06.2019թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից 1-ին և 2-րդ չափաբաժիններում **«ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ն,** իսկ 3-րդ չափաբաժնում **«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ն** և անգործության ժամկետի ավարտից հետո վերջիններիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/8» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Բաղրամյան)

2.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող, (ԳԱՊ)	Ա. Հովսեփյան
Գնահատող	Ա. Վարդանյան
Գնահատող	Վ. Ղևոնդյան
Գնահատող	Ա. Սիմոնյան
Գնումները համակարգող՝	Ա. Բաղրամյան